ԱՌ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒՆԵՑԱԾ ԻՐԵՆՑ ՆՎԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ
ՄՐՏԻ ԽՈՍՔՆ ԵՆ ԱՍՈՒՄ ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԳՈՒՅՈՒՄՃՅԱՆՆԵՐԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵՑ ՔՈՒՎԵՅԹԱԲՆԱԿ ԲԱՐԵՐԱՐ ԿԻՐԱԿՈՍ ԳՈՒՅՈՒՄՋՅԱՆԻՆ

Դեկտեմբերի 28-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայ Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշան շնորհեց քուվեյթահայ բարերար Կիրակոս Գույումջյանին, որն իր նպաստն է բերել Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու բարեզարդման աշխատանքներին՝ պատրաստելով եկեղեցու աստիճանավանդակի ճաղաշարերը՝ ի հիշատակ իր հանգուցյալ հոր՝ Ներսես Գույումջյանի:

«Էջ Միածին ի Հօրէ» շարականի երգեցողությունից հետո Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակն ընթերցեց Մայր Աթոռի դիվանապետ Հոգեշնորհ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը:

Այնուհետև տեր և տիկին Կիրակոս և Միլվա Գույումջյաններին իր օրհնության ու գնահատանքի խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը. «Մենք մխիթարություն ենք ապրում, որ հայրենիքից հեռու մեր սիրելի զավակներն այդպիսի նախանձախնդրության ոգի են դրսևորում և մասնակցություն բերում մեր հայրենաշինության գործին ու մեր հայրենիքում իրականացվող եկեղեցաշինության աշխատանքներին»,- նշեց Նորին Սրբությունը:

Իր պատասխան խոսքում Կիրակոս Գույումջյանը խորին շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ բարձր պարգևի արժանացնելու համար՝ նշելով. «Շատ ուրախ և հրճված եմ ինչպես ես, այնպես էլ իմ ընտանիքի մյուս անդամները, որ առիթ և հնարավորություն ունեցա այս հրաշալի եկեղեցու շինարարության մեջ մի համեստ քար զետեղելու: Թող այս եկեղեցին և մեր բոլոր տաճարներն անսասան մնան իրենց բարոյական, հոգևոր և նյութական արժեքներով»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ